

<b>Մասնագիտության նկարագիրը</b>	
<b>Պաշտոնի անվանումը</b>	<b>Բուժքույր (բուժեղբայր) - կոսմետոլոգ</b>
<b>I. Դերը</b>	Բուժքույր (բուժեղբայր) կոսմետոլոգը կարող է աշխատել գեղեցկության սրահներում, կոսմետոլոգիական ու էսթետիկական կենտրոններում, բժշկական կազմակերպություններում և սպասարկում է առանձին անձանց, պահպանելով ազգաբնակչության տարբեր սեռատարիքային խմբերի պատշաճ գեղագիտական արտաքին տեսքը և առողջությունը:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների իրականացում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բուժքույր կոսմետոլոգի աշխատատեղի նախապատրաստում,</li> <li>2) կոսմետոլոգիական սրահի սանիտարահիգիենիկ պահանջների ապահովում,</li> <li>3) կիրառվող սարքավորումների, գործիքների, հարմարանքների, պատրաստուկների և կոսմետիկ նյութերի նախապատրաստում,</li> <li>4) անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովում,</li> <li>5) անձնական հիգիենայի նորմերի պահպանում:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպում է անձնակազմի աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ՝ սրահ, սարքավորումներ, անհրաժեշտ նյութեր, պարագաներ և գործիքներ,</li> <li>2) պարբերաբար ապահովում է սրահի սանիտարահիգիենիկ պահանջները, կատարում է սրահի, սարքավորումների, պարագաների և գործիքների ամենօրյա և ընթացիկ սանիտարական մշակում,</li> <li>3) նախապատրաստում է կիրառվող սարքավորումները, գործիքները, կոսմետիկ նյութերը և պատրաստուկները,</li> <li>4) պահպանում է հակահրդեհային և անվտանգության տեխնիկայի կանոնները,</li> <li>5) պահպանում է հիգիենայի կանոնները՝ անձնական հիգիենա, համապատասխան հանդերձանք, սուր օժանելիքի և զարդերի բացակայություն:</li> </ol>

**Խնդիրների բնագավառ 2. Կոսմետոլոգիական միջամտությունների նախապատրաստում և իրականացում**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) պացիենտին խորհրդատվության տրամադրում,</li> <li>2) պացիենտի բուժական կոսմետոլոգիական միջամտության իրականացում, գեղազարդական պճնազարդման աշխատանքների կատարում,</li> <li>3) կոսմետիկական ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական և ավարտական աշխատանքների կատարում,</li> <li>4) մաշկի տեսակների, ձեռքերի և ոտքերի եղունգների կոսմետիկական խնամքի ժամանակակից մեթոդների ու եղանակների կիրառում:</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) իրականացում է կոսմետոլոգիական խորհրդատվություն պացիենտին,</li> <li>2) որոշում է պացիենտի մաշկաբանական խնդիրները,</li> <li>3) օգտագործում է կոսմետոլոգիայում կիրառվող նյութեր՝ հաշվի առնելով պացիենտի մաշկի առաձգականությունը, տեսակը և ներգործությունը,</li> <li>4) իրականացում է բուժական կոսմետոլոգիական, հարդարման ու գեղազարդական պճնազարդման աշխատանքներ, կոսմետիկական ծառայությունների համապատասխան միջամտություն և դրանց անհրաժեշտ նախապատրաստական ու ավարտական աշխատանքներ,</li> <li>5) կատարում է մաշկի տարբեր տեսակների, ձեռքերի և ոտքերի եղունգների կոսմետիկ խնամք՝ ժամանակակից մեթոդներով և եղանակներով,</li> <li>6) պահպանում է կոսմետոլոգիական հարդարման, պեդիկյուրի, մանիկյուրի սրահների հականեխիչ և ապանեխիչ միջոցներին ներկայացվող սանիտարական պահանջները,</li> <li>7) կիրառում է մաշկի տարբեր տեսակների, ձեռքերի և ոտքերի եղունգների կոսմետիկական խնամքի ժամանակակից մեթոդներ,</li> <li>8) կիրառում է պացիենտի արտաքին տեսքի ուղղման, գեղագիտական պճնազարդման և թերությունների ծածկման</li> </ol>

	<p>անհրաժեշտ միջոցներ ու եղանակներ,</p> <p>9) պահպանում է կոսմետիկական միջամտությունների տեխնոլոգիան և մեթոդակարգը,</p> <p>10) կիրառում է համապատասխան գործիքներ՝ կոսմետիկական տեխնոլոգիական գործընթացների իրականացման համար,</p> <p>11) կիրառում է դիմահարդարման ժամանակակից զանազան մեթոդներ ու եղանակներ՝ պացիենտի արտաքին տեսքի և տարիքային թերությունների ուղղման համար,</p> <p>12) կիրառում է հարդարման արվեստի ժամանակակից մեթոդները, գունագիտության և լույսի սկզբունքները, ընտրել գեղագիտական մտահղացումների իրականացման եղանակները,</p> <p>13) հաշվարկել պացենտների սպասարկման փուլերում օգտագործվող հումքի ու նյութերի ծախսը,</p> <p>14) իրականացնում է ծառայությունների գնագոյացման մեխանիզմները, աշխատանքի վարձատրության ժամանակակից ձևերը:</p>
--	---

**Խնդիրների բնագավառ 3. Նյութագիտություն և տեխնոլոգիական կահավորում**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>1) կոսմետիկ պատրաստուկներում կիրառվող հումքի հիմնական և հավելյալ տեսակները,</p> <p>2) կենսաբանորեն ակտիվ նյութերի կարևոր դերը և ներառումը կոսմետիկ միջոցներում,</p> <p>3) կոսմետիկ միջոցներում հաճախ օգտագործվող դեղերը, լուծույթների նոսրացումը և պատրաստման տեխնիկան,</p> <p>4) կոսմետոլոգիական սենյակների կահավորումը, շահագործվող սարքավորումների և գործիքների օգտագործման անվտանգության տեխնիկայի կանոնները, դրանց ախտահանումը և վարակազերծումը,</p>
---------------------------------------	--

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ներկայացնում է կոսմետիկ հումքի տեսակները՝ բնական և սինթետիկ, նրանց ֆիզիկաքիմիական հատկությունները, կիրառման ոլորտները, ցուցումներն ու հակացուցումները,</p> <p>2) ներկայացնում է կոսմետիկ միջոցներում օգտագործվող այլ անհրաժեշտ նյութերը՝ մակերևույթային ակտիվ նյութեր,</p>
-----------------------------------	--

	<p>էմուլգատորներ, հակաօքսիդանտներ, ներկանյութեր, հոտավետ նյութեր և դրանց անփոխարինելի դերը կոսմետիկ միջոցների պատրաստման գործում,</p> <p>2) ներկայացնում է կենսաբանորեն ակտիվ նյութերի՝ֆերմենտների, հորմոնների,վիտամինների, մակրոէլեմենտների,միկրոէլեմենտների, միզանյութի, ալֆա-հիդրօքսիթթուների, ֆիտոէստրոգենների կարևոր նշանակությունը կոսմետիկ միջոցներում և նրանց ցուցումներն ու հակացուցումները,</p> <p>4) ներկայացնում է հաճախ օգտագործվող դեղերի ազդեցության մեխանիզմները, կերատոլիտիկ հատկությունների կիրառումը պիլինգների ժամանակ և դեղորայքային լուծույթների պատրաստման տեխնիկան,</p> <p>5) ներկայացնում է կոսմետոլոգիական հաստատությունների, սրահների, սարքավորումների հագեցվածության համապատասխանությունը նորմերին՝ համապատասխան մակերես, լուսավորվածություն, սենյակի ջերմաստիճան, սառը և տաք ջրերի առկայություն, օդափոխիչներ, կաշվե կահույք, բաց գույնի վարագույրներ, օգտագործվող սարքեր և գործիքներ,</p> <p>6) ներկայացնում է ժամանակակից ախտահանիչ միջոցներով գործիքների ախտահանումը և որոշ ախտահանիչների անբարենպաստ ազդեցությունը օրգանիզմի վրա, ինչպես նաև ախտահանիչ միջոցների կարևոր դերը բակտերիաների, սնկերի վիրուսների նաև հեպատիտ Յ, ՄԻԱՎ ինֆեկցիայի կանխարգելման գործում:</p>
--	---

**Խնդիրների բնագավառ 4. Կոսմետիկ պատրաստուկների պատրաստման տեխնոլոգիան**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>1) կոսմետիկ պրեպարատների դասակարգումը ըստ ազդեցության և ձևի,</p> <p>2) հիմնական և լրացուցիչ մաքրող կոսմետիկ միջոցները,</p> <p>3) կոսմետիկ դիմակների բաղադրությունը, տեսակները նշանակությունը և պատրաստման տեխնիկան,</p> <p>4) կոսմետիկ պատրաստուկների ազդեցությունը կնճիռների վրա,</p> <p>5) դեղ պարունակող արտաքին օգտագործման միջոցները և</p>
---------------------------------------	--

	<p>դրանց պատրաստման տեխնիկան, 6) կոսմետիկ պատրաստուկների պահպանման կանոնները և դրանց որակական ու քանակական գնահատականը:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ներկայացնում է կոսմետիկ միջոցները ըստ ազդեցության՝ մաքրող, տոնուսավորող, խոնավեցնող, սնուցող, պաշտպանիչ, և ձևի՝ դիմակ, կրեմ, գել, լուծույթ, քսուկ, մածուկ, ցանափոշի, 2) դասակարգում է մաքրող միջոցները, նշելով մեխանիկական և քիմիական պիլինգի տեսակները, կատարման տեխնիկան, ցուցումներն ու հակացուցումները, 3) դասակարգում է կրեմները ըստ նշանակության՝ ելնելով բաղադրիչներից և մաշկի տեսակներից, տարիքային առանձնահատկություններից, 4) ներկայացնում է կոսմետիկ դիմակները ըստ նշանակության՝ մաքրող, սնուցող, խոնավեցնող, ձգող, շերտազատող, սպիտակեցնող և ըստ բաղադրության՝ մածուկանման, հեղուկ, գելանման, մոմանման, պատրաստման տեխնիկան և կիրառումը՝ ելնելով մաշկի տիպից և տարիքային առանձնահատկություններից, 5) դասակարգում է մաշկի տարբեր հիվանդությունների ժամանակ կիրառվող դեղորայք պարունակող արտաքին օգտագործման միջոցները՝ ցանափոշի, քսադեղ, մածուկ, 6) տիրապետում է դեղորայք պարունակող արտաքին օգտագործման միջոցների պատրաստման տեխնիկայի կանոններին ,ցուցումներին և հակացուցումներին:</p>
<p align="center"><b>Խնդիրների բնագավառ 5. Բուժական կոսմետոլոգիայում օգտագործվող սարքավորումներ և գործիքներ</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Բուժական կոսմետոլոգիայում օգտագործվող սարքավորումներն են՝ դարսոնվալ, իոնոֆորեզ և գալվանացում, շոգեբաղնիք, լամպ, չորանոց, վակուումային մաքրում, հեղուկ ազոտի սարք, էպիլյացիոն սարքեր, ջրային բաղնիք, խոշորացույց, գդալիկներ, ասեղներ, վրձիններ, չափիչ փորձանոթներ, կոսմետիկ նյութեր և այլ ժամանակակից նյութեր ու պարագաներ:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) դասակարգում է բուժական կոսմետոլոգիայում</p>

	<p>օգտագործվող սարքավորումները և գործիքները,</p> <p>2) ներկայացնում է ֆիզիոթերապևտիկ սարքավորումների օգտագործումը բուժական կոսմետոլոգիայում,</p> <p>3) կիրառում է անհրաժեշտ կոսմետիկ ու գեղագարդական նյութերը և պարագաները:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 6. Մերսում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>1) մերսման տեսակների, խնդիրների և նպատակների ներկայացում,</p> <p>2) դեմքի բուժական, կոսմետիկ և պլաստիկ մերսումները, նպատակները, ցուցումներն հակացուցումները և ներկայացվող պահանջները,</p> <p>3) գլխի մերսումը:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) տարբերակում է դեմքի մերսման տեսակները և կապը միմյանց միջև,</p> <p>2) ներկայացնում է մերսման ֆիզիոլոգիական ազդեցությունը, օգտագործվող հնարքները, մերսման ընթացակարգի պահպանումը, ասեպտիկայի ու անտիսեպտիկայի կանոնները,</p> <p>3) կատարում է դեմքի բուժական մերսում, պահպանելով ցուցումները, հակացուցումները, ելնելով մաշկի տիպից</p> <p>4) կատարում է դեմքի կոսմետիկ մերսում, պահպանելով ցուցումները և հակացուցումները, ելնելով մաշկի տիպից,</p> <p>5) կատարում է դեմքի պլաստիկ մերսում, պահպանելով ցուցումները և հակացուցումները, ելնելով մաշկի տիպից,</p> <p>6) տարբերակում է դեմքի պլաստիկ և կոսմետիկ մերսումները,</p> <p>7) կատարում է գլխի մերսում, պահպանելով ցուցումները և հակացուցումները օգտագործվող նյութերը, պարագաները և սարքերը՝ ելնելով անհրաժեշտությունից:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 7. Էպիլյացիա</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>1) Էպիլյացիայի տեսակները, ելնելով պացիենտի խնդիրներից,</p> <p>2) մազի կառուցվածքը, ֆունկցիան, տեսակները և ախտաբանական իրավիճակը՝ գերմազակալում (հիպերտրիխոզ),</p>

	<p>3) դեպիլյացիա և էպիլյատոր սարքեր,  4) ասեղային էպիլյացիա,  5) բիոէպիլյացիա:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ներկայացնում է էպիլյացիան, խնդիրները, տեսակները, ցուցումները և հակացուցումները,  2) կիրառում է էպիլյացիան մաշկի տարբեր տիպերի խնամքի և կոսմետիկ թերությունների ժամանակ,  3) ավտորոշում է օրգանիզմում ավստաբանական փոփոխությունների հետևանքով առաջացած գերմազակալման պատճառները, տեսակները և կանխարգելումը,  4) ներկայացնում է մազի կառուցվածքը, ֆունկցիան, հիգիենիկ խնամքը,  5) ներկայացնում է դեպիլյացիան, էպիլյացիայի և դեպիլյացիայի տարբերակումը, դեպիլյատոր նյութերի և էպիլյատոր սարքերի կիրառումը ըստ ցուցումների,  6) կատարում է ասեղային և բիոէպիլյացիայի միջամտությունները, ցուցումները, հակացուցումները, տարբերակում է դրանց կիրառումը մաշկի տարբեր տիպերի և կոսմետիկ թերությունների ժամանակ,  7) կատարում է ասեղային էպիլյացիայից հետո մաշկի խնամքը և վարակի կանխարգելումը,  8) պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները, էպիլյատոր սարքերի կիրառման ժամանակ:</p>
<p><b><u>Խնդիրների բնագավառ 8. Գեղազարդական կոսմետոլոգիա</u></b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>1) գեղազարդական կոսմետոլոգիայի զարգացումը, օգտագործվող նյութերը և գործիքները,  2) գեղազարդական կոսմետոլոգիայում օգտագործվող պարտադիր և ոչ պարտադիր նյութերը,  3) գույների ընտրությունը դիմահարդարման ժամանակ և մարդկային չորս տիպերի զանազանումը,  4) գրիմի ժամանակ պահպանվող կանոնները, պայմանները դիմահարդարման առանձնահատկությունները տարբեր ժամանակաշրջաններում,  5) ամենօրյա, երեկոյան, եվրոպական, արևելյան և</p>

	<p>հարսենական դիմահարդարումները,</p> <p>6) հեռուստատեսային գրիմ, բեմական դիմահարդարում, &lt;&lt;Smokey Eye&gt;&gt; (սմոքի այ),</p> <p>7) ոսկեգույն երանգների մեջ և ակվարելային ոճով դիմահարդարումները:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է դիմահարդարման ժամանակ օգտագործվող ոսկեգույն երանգները՝ արևահարված մաշկի համար, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,</p> <p>2) ներկայացնում է դիմահարդարումը ակվարելային ոճով՝ օգտագործելով վարդագույն երանգներ՝ աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան:</p>
<b>Խնդիրների բնագավառ 9. Ճեռքերի ու ոտքերի մատների հարդարում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>1) ձեռքերի եղունգների հարդարման տեսակները՝ թաց և չոր մաքրում, ձեռքերի մերսում, ՍՊԱ միջամտություն,</p> <p>2) ոտքերի եղունգների հարդարում՝ պեդիկյուր,</p> <p>3) եղունգների գեղազարդման հիմունքները,</p> <p>4) կոսմետիկ եղունգների տեղադրումը և հանումը,</p> <p>5) եղունգների լիցք:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ախտորոշում է եղունգների փոփոխությունները՝ կախված տարիքից և օրգանիզմի ախտաբանական վիճակից,</p> <p>2) կատարում է ձեռքերի եղունգների հարդարում՝ անհրաժեշտ նյութերով ու պարագաններով,</p> <p>3) կատարում է ձեռքերի ու ոտքերի մերսում,</p> <p>4) պահպանում է ձեռքերի և ոտքերի խնամքի ժամանակ ասեպտիկայի, անտիսեպտիկային կանոնները,</p> <p>5) կատարում է ոտքերի եղունգների հարդարում,</p> <p>6) կատարում է եղունգների գեղազարդման տեսակները,</p> <p>7) տեղադրում է կոսմետիկ եղունգներ և կատարում է եղունգների լիցք,</p> <p>8) օգտագործում է անհրաժեշտ նյութեր, պարագաններ՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	<p>Բուժքույր /բուժեղբայր/ կոսմետոլոգը պատասխանատու է իր կողմից կատարված միջամտությունների որակի, օգտագործվող նյութերի և սարքավորումների ընտրության հարցում պատվիրատուին խորհրդատվություն տրամադրելու,</p>



	<p>նյութական միջոցները արդյունավետ օգտագործելու, աշխատանքը պացիենտի պահանջներին և ակնկալվող արդյունքին համապատասխան կատարելու համար:</p> <p>Բուժքույր /բուժեղբայր/ կոսմետոլոգը իր աշխատանքային պարտականությունների շրջանակներում սխալ գործողության հետևանքով պացիենտի առողջության խաթարման կամ մահվան դեպքում պատասխանատվություն է կրում օրենքով հաստատված կարգով:</p>
<p><b>IV. Լեզուները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հայերեն- գերազանց</li> <li>- Ռուսերեն- բավարար</li> <li>- Անգլերեն- բավարար</li> <li>- Լատիներեն-լավ</li> </ul>
<p><b>V. Համակարգիչը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- MS Word – լավ</li> <li>- MS Excel – բավարար</li> <li>- Internet – լավ</li> </ul>
<p><b>VI. Գիտելիքները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հայաստանի Հանրապետության առողջապահության օրենսդրական և իրավական ակտերը,</li> <li>- անատոմիա, հիգիենա, դիետոլոգիա, դեղաբանություն,</li> <li>- քույրական գործի հիմունքները,</li> <li>- վիրաբուժություն, ներքին, մաշկային և վարակիչ հիվանդություններ, աղետների բժշկության հիմունքները,</li> <li>- դեմքի, ոտքերի, ձեռքերի մատների հարդարում,</li> <li>- կոսմետոլոգիական սարքավորումներ, դրանց կիրառումը, անվտանգության տեխնիկայի կանոնները,</li> <li>- կոսմետիկ նյութերը, պատրաստուկները, գործիքներն ու միջոցները,</li> <li>- դեղերի հիմնական խմբերը, օգտագործման ցուցումներն ու հակացուցումները, փոխազդման բնույթը, դեղամիջոցների ընդունումից առաջացած բարդությունները,</li> <li>- առողջ ապրելակերպի հիմունքները,</li> <li>- կոսմետոլոգիական հաստատությունների անձնակազմի, պացիենտների ինֆեկցիոն անվտանգության կանոնները:</li> </ul>
<p><b>VII. Կարողությունները և հմտությունները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- վերլուծել ստեղծված իրավիճակը և կայացնել որոշումներ մասնագիտության լիազորությունների և իրավասության</li> </ul>

	<p>սահմաններում,</p> <ul style="list-style-type: none"><li>- տիրապետել հաղորդակցման հմտություններին,</li><li>սպասարկման ժամանակակից մեթոդներին,</li><li>- տիրապետել կոսմետիկ նյութերի, պատրաստուկների ստացման տեխնոլոգիային, պահպանմանը և օգտագործման կանոններին,</li><li>- վարել բուժական կոսմետոլոգիական ծառայությունների փաստաթղթերը,</li><li>- կատարել ինֆեկցիոն հսկողության պահանջները, պահպանել պացիենտի ինֆեկցիոն անվտանգությունը,</li><li>- կատարել դիմահարդարում, ձեռքերի և ոտքերի մատների հարդարում, էպիլյացիա, դեմքի մակիյաժ, դեմակիյաժ, հոնքերի, թարթիչների կոսմետիկ խնամք, դիմագծերի կոսմետիկ շտկում և մերսում,</li><li>- օգտվել անհրաժեշտ բուժական կոսմետոլոգիական սարքավորումներից,</li><li>- կատարել քույրական միջամտություններ,</li><li>- ցուցաբերել նախաբժշկական օգնություն անհետաձգելի իրավիճակներում,</li><li>- ցուցաբերել օգնություն կոսմետիկ նյութերից առաջացած բարդությունների ժամանակ,</li><li>- կատարել ֆիզիոթերապևտիկ միջամտություններ,</li><li>- կատարել բուժական մարմնամարզություն, մերսում,</li><li>- իրականացնել խորհրդատվական աշխատանքներ առողջ ապրելակերպի վերաբերյալ,</li><li>- արտակարգ իրավիճակներում կատարել պացիենտի վիճակի գնահատում և ցուցաբերել նախաբժշկական օգնություն,</li><li>- կիրառել նոր տեղեկատվական տեխնոլոգիական մեթոդներ, հնարքներ և միջոցներ, իրականացնել տեղեկատվության փոխանցում և պահպանում,</li><li>- բարձրացնել գիտելիքների, կարողությունների, հմտությունների մասնագիտական մակարդակը,</li><li>- նախապատրաստել գործիքներ և օգնել բժշկին բարդ միջամտությունների կատարման ժամանակ,</li></ul>
--	---

	<ul style="list-style-type: none"> <li>- իրականացնել բուժական կոսմետոլոգիական սարքավորումների պահպանման, օգտագործման, դրանց ժամանակին վերանորոգման և դուրս գրման հսկողությունը,</li> <li>- իրականացնել կոսմետիկ սրահի կահավորումը:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ,</li> <li>- կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած խնդիրներին և կոնֆլիկտներին տալ համապատասխան լուծումներ,</li> <li>- կարողանալ նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսությունները և քննարկումները,</li> <li>- լինել հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, համբերատար, պարտաճանաչ:</li> <li>- լինել պարկեշտ, անկաշկանդ, պատասխանատու, կարգապահ, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, ընկերասեր:</li> <li>- ունենալ մասնագիտական ոլորտում ինքնակատարելագործման ձգտում:</li> </ul>